Կարգապահական գործ թիվ ԿԳ-26005

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՄԱՐԻԱՄ ԱՐԱՄԻ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահագն Քեշիշյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Կարինե Բաղդասարյանի, Գուրգեն Թորոսյանի, Կարեն Խալաթյանի և Արաքս Վարդանյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մերի Տերտերյանի,

մասնակցությամբ՝ դիմող Արտյոմ Հարությունյանի և դիմողի ներկայացուցիչ Մարինե Գրիգորյանի,

քննության առնելով փաստաբան Մարիամ Արամի Աբրահամյանին (արտոնագիր՝ թիվ 490), **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)**, կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Քաղաքացի Արտյոմ Հարությունյանը **(այսուհետ նաև՝ Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ նաև՝ Պալատ)**, հայտնել է, որ 26.10.2023թ. ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքել փաստաբան Մարիամ Աբրահամյանի հետ, համաձայն որի՝ Փաստաբանը պետք է ներկայացներ Դիմողի շահերը դատարանում՝ հողային իրավունքի հետ կապված հարցերով:

Դիմողը նշել է, որ առձեռն 200.000 ՀՀ դրամ գումար է տվել Փաստաբանին, իսկ վերջինս որևէ ծառայություն չի մատուցել և ինքը հրաժարվել է Փաստաբանի ծառայություններից՝ պահանջելով վերադարձնել գումարը և բնօրինակ փաստաթղթերը:

Թիվ ԿԳ-26005-2-Ա
27.05.2026թ.

Դիմողը հավելել է նաև, որ ներկայումս էլ Փաստաբանը չի պատասխանում իր հեռախոսազանգերին և փաստաբանին ոչ վայել վարքագիծ է դրսևորում:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Դիմողը խնդրել է փաստաբան Մարիամ Աբրահամյանին ենթարկել կարգապահական պատասխանատվության, ինչպես նաև ապահովել վճարված գումարի վերադարձը:

Պալատի սպասարկող բաժնի աշխատակիցը 10.03.2026թ. Դիմողին հասցեագրել է նաև կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելու մասին պահանջ, որին Դիմողը չի պատասխանել:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Արտյոմ Հարությունյանը նշել է, որ իրենց համայնքապետը չի մահացել և ողջ է, իսկ Մարիամ Աբրահամյանը երբևէ իրենց գյուղ չի գնացել: Նշված փաստաթղթերը Կադաստրի կոմիտեից և համայնքից պահանջել և ստացել է ոչ թե Մարիամ Աբրահամյանը, այլ նախորդ փաստաբանը:

Փաստաբանը ք.Աշտարակում գտնվող քննչական բաժանմունք գնացել է 2 կամ 3 անգամ: Փաստաբանը նաև չի բողոքարկել քրեական գործը կարճելու մասին քննիչի որոշումը, սակայն դիմողին վստահեցրել է, որ բողոքարկել է այն դատական կարգով:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը Փաստաբանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը ներկայացրել է բացատրություն, որով հերքել է Դիմողի հայտնած տեղեկատվությունը: Վերջինս նշել է, որ պայմանագրի կնքումից հետո հարցում է կատարել և ստացել հողամասի կադաստրային գործը, որի ուսումնասիրությունից պարզ է դարձել, որ առկա է քարտեզի ուղղման անհրաժեշտություն: Դիմողին ներկայացրել է խնդիրը և Դիմողը ցանկություն է հայտնել չափագրում կատարել: Չափագրման արդյունքում հաստատվել է իր ասածը և Դիմողին առաջարկել է դիմել համայնքի ղեկավարին, ապա մերժում ստանալու դեպքում՝ դատարան:

Փաստաբանին Դիմողը հայտնել է, որ համայնքի ղեկավարը հարևանի օգտին գործողություններ է կատարում և կարող է խոչընդոտել գործընթացին, ուստի՝ հարցին լուծում կտրվի միայն Դիմողի հաղորդման հիման վրա հարուցված քրեական վարույթով հաջողության հասնելու դեպքում:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ, ինչի արդյունքում Դիմողը փոխել է հանձնարարությունը և հանձնարարել է Փաստաբանին՝ ծառայություններ մատուցել քրեական գործի շրջանակներում:

Փաստաբանը նշել է, որ մի քանի անգամ այցելել է ք.Աշտարակ՝ քննչական գործողության, քննիչի անգործության դեմ բողոքներով է հանդես եկել, կատարել է այն ամենն, ինչ անհրաժեշտ է եղել գործով:

Քրեական վարույթը կարճվել է համայնքի ղեկավարի մահվան հիմքով, սակայն գործով

հարցաքննվել են մի շարք անձինք, որոնց ցուցմունքները կարող էին էական նշանակություն ունենալ գործի համար, ինչից հետո քրեական վարույթի նյութերը՝ չափագրման բնօրինակ նյութերի հետ միասին, տրամադրվել են Դիմողին:

Փաստաբանը բացատրությամբ հայտնել է նաև, որ Դիմողի պնդումները չեն համապատասխանում իրականությանը, ինքն է դիմողին տրամադրել չափագրման նյութերի բնօրինակները, իսկ Դիմողն իրեն երբևէ բնօրինակ փաստաթղթեր չի տվել:

Փաստաբանը դիմողին հայտնել է, որ առողջական խնդիրներով պայմանավորված չի կարող շարունակել ներկայացնել նրան, առաջարկել է գալ, փաստթղթերը ստանալ, ինչպես նաև հաշվեհամար տրամադրել՝ գումարի մի մասը վերադարձնելու համար: Սակայն Դիմողի կինը չի ներկայացել նշանակված հանդիպումներին կամ ներկայանալով՝ չի ստացել փաստաթղթերը:

Մասնավորապես, Փաստաբանը նշել է, որ 2025թ. նոյեմբերի 05-ին Դիմողի կինը ներկայացել է փաստաթղթերը վերցնելու համար, սակայն ներկայանալով չի վերցրել փաստաթղթերը: Նույն թվականի նոյեմբերի 17-ին նշանակված հանդիպմանը Դիմողի կինը չի ներկայացել, և նոյեմբերի վերջին կրկին ներկայացել է, բանակցել Փաստաբանի կողմից ծառայությունների մատուցումը շարունակելու վերաբերյալ, իսկ Փաստաբանը հայտնել դրա անհնարինության մասին, որի արդյունքում կրկին չի վերցրել փաստաթղթերը, ինչից հետո Փաստաբանը փաստաթղթերը ուղարկել է Դիմողի հաշվառման հասցեով: Փաստաթղթերը հետ են ստացվել «տեղափոխված» նշումով:

Փաստաբանը նշել է, որ Դիմողը Քննչական կոմիտեից ուղարկված փաստաթղթերը ստացել է հենց այդ հասցեով:

Ըստ փոստային անդորրագրի՝ Դիմողին ուղարկված ծրարը կշռել է 666 գրամ, իսկ A4 ֆորմատի մեկ թղթի քաշը 5 գրամ է, ինչը նշանակում է, որ Դիմողին ուղարկվել է 110 և ավելի թղթից բաղկացած փաստաթղթեր:

Այսինքն, ոչ թե Դիմողն է իրեն ներկայացրել պայմանագիրը դադարեցնելու մասին գրավոր ծանուցում, այլ ինքն է Դիմողին գրավոր տեղեկացրել ծառայությունների մատուցումը շարունակելու անհնարինության վերաբերյալ:

Փաստաբանը գտել է, որ իրականությանը չի համապատասխանում նաև իր կողմից որևէ գործողության չկատարելը, քանի որ ներկայացրել է հաղորդում, դիմումներ, բողոքներ, մասնակցել է քննչական գործողությունների և կատարել է այն ամենը, ինչ գործով անհրաժեշտ է եղել:

Նշել է նաև, որ Պալատին հասցեագրված դիմումում Դիմողը նշել է հենց այն հասցեն, որով ինքն է ուղարկել փաստթղթերը և Դիմողը չի ստացել դրանք:

Փաստաբանը կցել է նաև կից փաստաթղթեր՝ հավաստելու համար իր կողմից կատարված աշխատանքները և ծանուցումը՝ ծառայություններ մատուցելուց հրաժարվելու մասին:

Պալատի սպասարկող բաժնի աշխատակիցը 10.03.2026թ. Փաստաբանին հասցեագրել է

է նաև կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելու մասին պահանջ, որին Փաստաբանը չի պատասխանել:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 16.02.2026 թվականի թիվ **95-Ա/ԿԳ-26005** որոշմամբ փաստաբան Մարիամ Աբրահամյանի նկատմամբ **«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի (այսուհետ՝ Կանոնագիրք) 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1), (3) ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

20.02.2026թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից Շուշան Հարությունյանին (**այսուհետ՝ Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 20.04.2026թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված են համարվել սույն որոշման 5-րդ գլխի 1-6-րդ կետերում նշված փաստերը, իսկ 7-8-րդ կետում նշված փաստերը հաստատված չեն համարվել:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 20.04.2026թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 27.05.2026թ. ժամը 18:30-ին՝ ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1. Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է Դիմողի և Փաստաբանի միջև 26.10.2023թ. Փաստաբանական ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագրի պատճենով* ***(այսուհետ՝ Պայմանագիր):***

2. Պայմանագրի 2.1 կետի համաձայն՝ կողմերի համաձայնությամբ սույն պայմանագրի

շրջանակներում Կատարողը կազմակերպում է պատվիրատուի շահերի պաշտպանությունը՝ ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության, վարչական, սնանկության, հակակոռուպցիոն, վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, ինչպես նաև ՀՀ դատական դեպարտամենտի բոլոր ստորաբաժանումներում: *Սույն փաստը հաստատվում է 26.10.2023թ. Փաստաբանական ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագրի պատճենով:*

3. Դիմողի և Փաստաբանի միջև կնքվել է համաձայնագիր՝ ըստ որի՝ պայմանագրի առարկան փոփոխվել է և ներկայացուցչությունն իրականացվել է քրեական վարույթի շրջանակներում: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի կողմից ներկայացված Համաձայնության պատճենով:*

4. Փաստաբանի ներկայացրած բացատրության համաձայն՝ 2025 թվականի օգոստոսին Դիմողը նրան տրամադրել է քրեական հետապնդման դադարեցման և քրեական վարույթի կարճման վերաբերյալ որոշումների պատճենները: Քրեական վարույթը կարճելու վերաբերյալ որոշումը Փաստաբանի կողմից չի բողոքարկվել:

5. 2025 թվականի օգոստոսի վերջին և սեպտեմբերի սկզբին կողմերի միջև տեղի է ունեցել հաղորդակցություն Դիմողի փաստաթղթերը վերադարձնելու վերաբերյալ: Մասնավորապես՝ 2025 թվականի սեպտեմբերի 4-ին Փաստաբանը Դիմողին առաջարկել է հաջորդ օրը ներկայանալ և վերցնել փաստաթղթերը, սակայն հետագա՝ սեպտեմբերի 10-ի հաղորդագրությունից հետևում է, որ փաստաթղթերի հանձնումը չէր կայացել: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի կողմից ներկայացված հաղորդագրությունների լուսապատճեններով:*

6. 02.12.2025թ. Փաստաբանը Դիմողին փոստային եղանակով ուղարկել է 666 գրամ քաշով առաքանի, որը հետ է վերադարձել «տեղափոխված» նշումով: *Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի կողմից ներկայացված փոստային անդորրագրով և Փաստաբանի բացատրությամբ:*

7. Գործում առկա է Փաստաբանի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 5-ին էլեկտրոնային եղանակով ստորագրված գրություն, որով նա հայտնել է ծառայությունների մատուցումը շարունակելու անհնարինության, փաստաթղթերը վերադարձնելու և Դիմողի կողմից վճարված 200.000 ՀՀ դրամից 80.000 ՀՀ դրամը վերադարձնելու պատրաստակամության մասին: Միաժամանակ գործում առկա չէ նշված գրությունը Դիմողին ուղարկելու կամ հանձնելու վերաբերյալ ապացույց:

8. Կարգապահական գործի նյութերով չի հաստատվում, որ վերադարձման ենթակա 80.000 ՀՀ դրամը փաստացի վերադարձվել է Դիմողին կամ որ Փաստաբանի մոտ գտնվող փաստաթղթերը փաստացի հանձնվել են վերջինիս:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները</u>.

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Մարիամ Աբրահամյանը փաստաբան է հանդիսանում 20.10.2006 թվականից, իսկ 2021-2026թթ. ժամանակահատվածում նրա վերաբերյալ կայացվել է կարգապահական պատասխանատվության ենթարկելու 4 որոշում:

Դրանցից 19.03.2025թ. թիվ ԿԳ/24177-2-Ա որոշմամբ կիրառված հիմնական տույժը մարվել է, իսկ լրացուցիչ՝ «Դեոնթոլոգիա» թեմայով վերապատրաստման տույժը մարված չէ: 30.04.2025թ. թիվ ԿԳ-25056-2-Ա և թիվ ԿԳ-25057-2-Ա որոշումներով կիրառված տույժերը ևս մարված չեն:

Միաժամանակ, Հանձնաժողովի 29.10.2025թ. թիվ ԿԳ-25076-2-Ա որոշումն ուժի մեջ չի մտել՝ այն դատական կարգով բողոքարկված լինելու պատճառով, ուստի դրանով կիրառված կարգապահական տույժը չի կարող ազդեցություն ունենալ սույն գործով նշանակվող կարգապահական տույժի տեսակի ընտրության վրա:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Մարիամ Աբրահամյանն ենթակա է կարգապահական պատասխանատվության՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1), (3) ենթակետերի պահանջների խախտման համար:

- **Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, Կանոնագրքի 3.5.5 ենթակետերի խախտման մասով**

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է՝ ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով, պահպանել Օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Կանոնագրքի 2.7.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:*

Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալիս իր մասնագիտական պարտականությունները կատարել ողջամտորեն, բարեխղճորեն, որակավորված, սկզբունքայնորեն և ժամանակին, ինչը ներառում է՝*

ա. նյութերի ուսումնասիրությունը,

բ. վերաբերելի իրավական ակտերի ուսումնասիրությունը,

գ. վստահորդին վերջինիս հանձնարարության կատարման կապակցությամբ հնարավոր իրավական հետևանքների առաջացման մասին իրազեկումը,

դ. վստահորդի հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը:

Փաստաբանի մասնագիտական բարձր որակավորումը և իր պարտականությունների բարեխիղճ կատարումը փաստաբանության ինստիտուտի հանրային ընկալման առանցքային տարրերից են, որոնց բացակայությունն արժեզրկում է փաստաբանի՝ որպես իրավապաշտպան և արդարադատության կայացմանը նպաստող գործառույթներ իրականացնող անձի հասարակական նշանակությունը:

Նշվածի հաշվառմամբ՝ Կանոնագրքի 3.5.5 ենթակետից բխում է նաև, որ փաստաբանը պարտավոր է վստահորդի շահերի պաշտպանության համար էական նշանակություն ունեցող հանգամանքների առնչությամբ ցուցաբերել պատշաճ մասնագիտական վարքագիծ՝ գնահատել դրանց իրավական նշանակությունը, որոշել հետագա անհրաժեշտ գործողությունները և հնարավոր իրավական հետևանքների մասին ժամանակին իրազեկել Վստահորդին:

Հանձնաժողովն արձանագրում է, որ նշված կանոնը փաստաբանից չի պահանջում վստահորդի համար որոշակի արդյունքի ապահովում և ինքնին չի ենթադրում գործով կայացված յուրաքանչյուր դատավարական ակտի պարտադիր բողոքարկում: Փաստաբանի մասնագիտական պարտականությունն է ստանձնած հանձնարարության շրջանակում գնահատել վստահորդի իրավունքների և օրինական շահերի վրա ազդեցություն ունեցող դատավարական ակտերը, որոշել դրանց նկատմամբ համապատասխան իրավական միջոց կիրառելու անհրաժեշտությունը և այդ գնահատման արդյունքի ու հնարավոր իրավական հետևանքների մասին տեղեկացնել վստահորդին:

Գործի նյութերից հետևում է, որ կողմերը փոփոխել են 26.10.2023թ. կնքված պայմանագրի առարկան, և Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի ներկայացուցչությունը նրա հաղորդման հիման վրա իրականացվող քրեական վարույթի շրջանակներում: Կողմերի ստորագրած համաձայնագրով Փաստաբանի կողմից կատարման ենթակա գործողությունների շարքում ուղղակիորեն նախատեսվել է նաև անհրաժեշտության դեպքում վարույթն իրականացնող մարմնի որոշումների բողոքարկումը:

Հանձնաժողովի գնահատմամբ՝ «անհրաժեշտության դեպքում» ձևակերպումը չի նշանակում, որ դատավարական ակտի բողոքարկման հարցը կարող էր մնալ առանց մասնագիտական գնահատման: Բողոքարկման փաստական և իրավական հիմքերի, դրա նպատակահարմարության և հնարավոր հետևանքների գնահատումը փաստաբանի մասնագիտական գործառույթն է, իսկ այդ գնահատման հիման վրա իրավական պաշտպանության համապատասխան միջոցից օգտվելու վերաբերյալ վստահորդի դիրքորոշումը պետք է ձևավորվի իրեն տրամադրված լիարժեք իրավական

տեղեկատվության պայմաններում:

Փաստաբանի բացատրությունից հետևում է, որ 2025 թվականի օգոստոսին իրեն տրամադրվել են քրեական վարույթի շրջանակներում կայացված որոշումների պատճենները: Միաժամանակ գործում առկա նամակագրությունից հետևում է, որ առնվազն 2025 թվականի սեպտեմբերի սկզբից կողմերի հաղորդակցությունն արդեն վերաբերել է Փաստաբանի մոտ գտնվող փաստաթղթերի վերադարձին, ինչը վկայում է ծառայությունների մատուցման դադարեցման մասին: Հետևաբար համապատասխան դատավարական ակտերը ստանալու պահին Փաստաբանի ստանձնած հանձնարարությունը դեռևս դադարած չի եղել:

Միաժամանակ գործով անվիճելի է, որ քրեական վարույթի վերաբերյալ կայացված որոշումը Փաստաբանի կողմից չի բողոքարկվել, իսկ Դիմողը Հանձնաժողովի նիստում հայտնել է, որ Փաստաբանն իրեն տեղեկացրել է որոշման բողոքարկված լինելու մասին: Դիմողի կողմից ներկայացված այդ հանգամանքը նշանակություն ունի ոչ թե կարճման որոշման իրավաչափությունը գնահատելու, այլ այն պարզելու տեսանկյունից, թե արդյոք վստահորդին հնարավորություն է տրվել իրազեկված դիրքորոշում ձևավորելու իր իրավունքների հետագա պաշտպանության վերաբերյալ:

Հանձնաժողովը չի գնահատում քրեական վարույթը կարճելու մասին որոշման իրավաչափությունը կամ դրա բողոքարկման հնարավոր արդյունքը: Միաժամանակ, այդ որոշումը ստանալուց հետո Փաստաբանը պարտավոր էր ձևավորել մասնագիտական դիրքորոշում դրա բողոքարկման անհրաժեշտության վերաբերյալ և այդ դիրքորոշման ու հնարավոր իրավական հետևանքների մասին ժամանակին տեղեկացնել Դիմողին: Եթե Դիմողը ցանկություն էր հայտնում բողոքարկելու որոշումը, Փաստաբանը պարտավոր էր կամ ձեռնարկել անհրաժեշտ գործողությունները, կամ դրանց կատարման անհնարինության մասին ժամանակին տեղեկացնել վստահորդին՝ վերջինիս հնարավորություն տալով ընտրելու պաշտպանության այլ միջոց:

Հետևաբար տվյալ դեպքում Կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտումը Հանձնաժողովը պայմանավորում է ոչ թե ինքնին քրեական վարույթը կարճելու մասին որոշումը չբողոքարկելու հանգամանքով, այլ այն բանով, որ Փաստաբանը, ստանալով իր կողմից իրականացվող ներկայացուցչության համար էական նշանակություն ունեցող դատավարական ակտերը, չի ապահովել դրանց նկատմամբ պատշաճ մասնագիտական արձագանք՝ բողոքարկման անհրաժեշտության հարցի գնահատում, այդ գնահատման արդյունքի և իրավական հետևանքների վերաբերյալ վստահորդի իրազեկում և դրա հիման վրա վստահորդի հետագա իրավական պաշտպանության վերաբերյալ իրազեկված դիրքորոշման ձևավորում:

Այս պայմաններում Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագիծը չի համապատասխանել Կանոնագրքի 3.5.5 ենթակետով նախատեսված՝ հանձնարարության կատարման հնարավոր իրավական հետևանքների մասին վստահորդին իրազեկելու և

հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ կատարելու պահանջներին:

- **Կանոնագրքի 3.6.1 ենթակետի խախտման մասով.**

Կանոնագրքի 3.6.1-րդ ենթակետի համաձայն՝ *Փաստաբանը պարտավոր է կանոնավորապես տեղեկացնել վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:*

Սույն կանոնից բխում է, որ փաստաբանները ոչ միայն կրում են վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալու, այլ նաև տրամադրված օգնության կամ գործի ընթացքի մասին վերջիններիս տեղեկացնելու պարտականություն: Ընդ որում, փաստաբանի կողմից հենց այս պարտականության կատարումն է, որ հնարավորություն է տալիս վստահորդներին օրինակ տվյալ գործով փոխել իրենց դիրքորոշումը, մոտեցումները կամ նույնիսկ պահանջը: Վերջապես վստահորդի հարցերին պատասխանելը այն ողջամիտ ակնկալիքն է, որ յուրաքանչյուր վստահորդ ունի իր փաստաբանից:

Նշված պարտականությունն իր բնույթով սերտորեն փոխկապակցված է Կանոնագրքի 3.5.5-րդ ենթակետով սահմանված պահանջների հետ, քանի որ վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին տեղեկացնելու պարտականությունը ենթադրում է, որ փաստաբանը նախ իրականացնում է հանձնարարությունից բխող համապատասխան գործողություններ, ձևավորում է որոշակի ընթացք, և այնուհետև այդ ընթացքի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ է հաղորդում վստահորդին:

Այլ կերպ, վստահորդին գործի ընթացքի մասին տեղեկացնելը չի հանդիսանում փաստաբանի գործունեությունից առանձնացված պարտականություն, այլ հանդիսանում է նրա կողմից իրականացվող իրավաբանական օգնության բնական և անհրաժեշտ բաղադրիչը: Հետևաբար, երբ փաստաբանը չի կատարում հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողություններ, նա ոչ միայն չի ապահովում վստահորդի շահերի արդյունավետ պաշտպանությունը, այլ նաև չի ստեղծում այնպիսի փաստական և իրավական ընթացք, որի մասին կարող էր կանոնավորապես տեղեկացնել վստահորդին:

Սույն գործի շրջանակներում Հանձնաժողովն արձանագրում է, որ Փաստաբանը ստանձնել է Դիմողի շահերի ներկայացուցչությունը քրեական վարույթի շրջանակներում, իսկ 2025 թվականի օգոստոսին ստացել է վարույթով կայացված որոշումների պատճենները: Այդ հանգամանքները, իրենց բնույթով, անմիջականորեն առնչվել են ստանձնած հանձնարարության ընթացքին և ենթադրել են Դիմողին դրանց բովանդակության, իրավական նշանակության և հետագա հնարավոր գործողությունների վերաբերյալ տեղեկություն տրամադրելու անհրաժեշտություն: Մինչդեռ Փաստաբանի ներկայացրած բացատրություններից և գործում առկա հաղորդակցություններից չի հետևում, որ վերջինս Դիմողին կանոնավորապես տեղեկացրել է հանձնարարության

կատարման ընթացքի, կատարված կամ նախատեսվող գործողությունների, ինչպես նաև քրեական վարույթի վերաբերյալ կայացված որոշումների հետ կապված իր մասնագիտական դիրքորոշման մասին: Գործում ներկայացված նամակագրությունը հիմնականում վերաբերում է փաստաթղթերի վերադարձին և չի հաստատում հանձնարարության ընթացքի վերաբերյալ կանոնավոր իրազեկման փաստը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը չի ապահովել Կանոնագրքի 3.6.1 ենթակետով սահմանված՝ վստահորդին հանձնարարության կատարման ընթացքի մասին կանոնավորապես տեղեկացնելու և վերջինիս հետաքրքրող հարցերին պատշաճ արձագանքելու պարտականության կատարումը:

- **Կանոնագրքի 3.8.4 (1) (3) ենթակետի խախտման մասով.**

Կանոնագրքի 3.8.4 (1) (3) ենթակետի համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝*

1) վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին ***վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել****, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ.*

3) ***վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը*** *(փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):*

Վերոգրյալից հետևում է, որ պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը, ինչպես նաև հոնորարի այն մասը, որի դիմաց ծառայություն չի մատուցվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Հանձնաժողովի գնահատմամբ՝ Կանոնագրքի 3.8.4 ենթակետը վերադարձման պարտականությունների կատարման պահը ուղղակիորեն կապում է պայմանագրի լուծման հետ: Հետևաբար պայմանագրի լուծմամբ փաստաբանի համար ծագում է վերադարձման ենթակա հոնորարի մասը և վստահորդի փաստաթղթերը վերադարձնելու անմիջական պարտականություն: Ընդ որում, վերադարձնելու պատրաստակամություն հայտնելը կամ մեկանգամյա փորձ կատարելը դեռևս չի նշանակում պարտականության կատարում. եթե վերադարձը չի կայացել, այդ պարտականությունը շարունակում է գոյություն ունենալ, և փաստաբանը պետք է ողջամիտ ժամկետում ձեռնարկի այն փաստացի կատարելու համար անհրաժեշտ գործողությունները:

Գործում առկա նամակագրությունից հետևում է, որ 2025 թվականի սեպտեմբերի 4-ին Փաստաբանը Դիմողին առաջարկել է հաջորդ օրը ներկայանալ և վերցնել փաստաթղթերը, սակայն սեպտեմբերի 10-ի հաղորդագրությունից արդեն իսկ պարզ է դառնում, որ դրանց

հանձնումը չի կայացել: Ներկայացված նամակագրությունը վերաբերում է բացառապես փաստաթղթերի վերադարձին և ընդգրկում է կարճ ժամանակահատված:

Միաժամանակ գործում առկա է Փաստաբանի կողմից 2025 թվականի սեպտեմբերի 5-ին էլեկտրոնային եղանակով ստորագրված գրություն, որում վերջինս արձանագրել է պայմանագրային հարաբերությունները դադարեցնելու և ստացված 200.000 ՀՀ դրամից 80.000 ՀՀ դրամ վերադարձնելու իր դիրքորոշումը: Սակայն գործում առկա չէ նշված գրությունը Դիմողին ուղարկելու կամ հանձնելու որևէ ապացույց: Հետևաբար այն կարող է վկայել Փաստաբանի՝ հոնորարի մի մասը վերադարձնելու պարտականությունը գիտակցելու մասին, սակայն ոչ այդ պարտականությունը կատարելու ուղղությամբ Դիմողի նկատմամբ կատարված գործողության մասին:

Սեպտեմբեր ամսվա նամակագրությունից հետո գործում առկա չէ փաստաթղթերի կամ հոնորարի վերադարձն ապահովելու ուղղությամբ ձեռնարկված հաջորդական գործողությունները հաստատող ապացույց: Հաջորդ գործողությունը վերաբերում է 2025 թվականի դեկտեմբերի 2-ի փոստային առաքմանը, որով Փաստաբանը առաջարկել է ստանալ փաստաթղթերը և տրամադրել հաշվեհամար՝ գումարը փոխանցելու համար: Նշված առաքանի Դիմողին չի հանձնվել և վերադարձվել է Փաստաբանին:

Այսպիսով, նույնիսկ ընդունելով, որ սեպտեմբերին փաստաթղթերի հանձնումը չի կայացել Փաստաբանից անկախ պատճառներով, այդ հանգամանքը չի դադարեցրել դրանք վերադարձնելու պարտականությունը: Նույնը վերաբերում է հոնորարի վերադարձին. 80.000 ՀՀ դրամ վերադարձնելու վերաբերյալ Փաստաբանի հայտարարությունը չի ուղեկցվել դրա փաստացի վերադարձով կամ այն ժամանակին ապահովելուն ուղղված ապացուցված գործողություններով:

Հետևաբար Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանը պայմանագրային հարաբերությունների դադարեցման կապակցությամբ ողջամիտ ժամկետում չի ապահովել ո՛չ վերադարձման ենթակա հոնորարի մասի, ո՛չ էլ Դիմողի փաստաթղթերի վերադարձը, իսկ ամիսներ անց ձեռնարկված գործողությունները չեն վերացնում մինչ այդ Կանոնագրքի 3.8.4 (1) և (3) ենթակետերով նախատեսված պարտականությունների չկատարման փաստը:

8. <u>Կարգապահական տույժի ընտրությունը.</u>

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Հանձնաժողովն արձանագրում է հետևյալը:

Օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ *փաստաբանների պալատի խնդիրներն են՝ վերահսկողություն իրականացնել իր անդամների կողմից սույն օրենքի, փաստաբանների պալատի կանոնադրության և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների պահպանման, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա*

հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի պահանջների կատարման նկատմամբ.

Օրենքի 39.10 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի.*

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցել.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Օրենքի 39.10 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.10-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում տույժի տեսակը փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը կարող է կիրառել՝ սույն օրենքով նախատեսված պարտականությունների (ներառյալ՝ սույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված վարքագծի կանոնների) դիտավորությամբ կատարված խախտման դեպքում, որը, պայմանավորված կատարման հանգամանքներով կամ առաջացրած հետևանքներով, համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:*

Հանձնաժողովն արձանագրում է, որ արտոնագրի գործողության դադարեցում տույժի կիրառման հարցը պետք է գնահատվի ինչպես սույն գործով հաստատված խախտումների բնույթի և կատարման հանգամանքների, այնպես էլ Փաստաբանի անձը բնութագրող և պատասխանատվությունն անհատականացնող հանգամանքների համակցությամբ:

Տվյալ դեպքում Հանձնաժողովը հաշվի է առնում, որ Փաստաբանը նախկինում ևս ենթարկվել է կարգապահական պատասխանատվության այնպիսի մասնագիտական պարտականությունների խախտումների համար, որոնք նույնաբնույթ են սույն գործով հաստատված խախտումներին: Մասնավորապես, 19.03.2025թ. թիվ ԿԳ/24177-2-Ա որոշմամբ, ի թիվս այլնի, Կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտումների համար նրա նկատմամբ կիրառվել է «խիստ նկատողություն» հիմնական տույժը և «Դեոնթոլոգիա» թեմայով լրացուցիչ վերապատրաստում: Թեև հիմնական տույժը մարվել է, լրացուցիչ տույժը մարված չէ, քանի որ Փաստաբանը չի մասնակցել նշանակված վերապատրաստմանը:

Այնուհետև՝ 30.04.2025թ. թիվ ԿԳ-25056-2-Ա և թիվ ԿԳ-25057-2-Ա որոշումներով, Փաստաբանը կրկին ենթարկվել է կարգապահական պատասխանատվության, այդ թվում՝ Կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերի խախտումների համար, և յուրաքանչյուր դեպքում նրա նկատմամբ կիրառվել է 200.000 ՀՀ դրամ տուգանք, ինչպես նաև լրացուցիչ վերապատրաստում: Այսպիսով, Փաստաբանի նկատմամբ նախկինում կիրառվել են տարբեր բնույթի կարգապահական միջոցներ՝ ուղղված նրա մասնագիտական վարքագծի շտկմանը, սակայն դրանց կիրառումը չի հանգեցրել համապատասխան մասնագիտական պարտականությունների պահպանմանը: Հատկանշական է նաև, որ Փաստաբանը չի մասնակցել հենց մասնագիտական վարքագծի կանոնների պահպանմանն ուղղված «Դեոնթոլոգիա» թեմայով նշանակված վերապատրաստմանը, իսկ հետագայում կիրառված դրամական տույժերը ևս չեն կանխել նույնաբնույթ խախտումների կրկնությունը:

Սույն գործով Հանձնաժողովը կրկին հաստատել է Կանոնագրքի 3.5.5 և 3.6.1 ենթակետերով նախատեսված պարտականությունների խախտումներ, ինչպես նաև պայմանագրային հարաբերությունների դադարեցման դեպքում վերադարձման ենթակա հոնորարի մասը և վստահորդի փաստաթղթերը վերադարձնելու պարտականությունների չկատարում: Ընդ որում, վերջին պարտականությունների առնչությամբ գործի նյութերը վկայում են, որ Փաստաբանը գիտակցել է դրանց գոյությունը. 05.09.2025թ. իր կողմից կազմված գրությամբ նա արձանագրել է փաստաթղթերը և 80.000 ՀՀ դրամը վերադարձնելու անհրաժեշտությունը, սակայն դրանց փաստացի վերադարձը ժամանակին չի ապահովել, իսկ այդ ուղղությամբ հաջորդ ապացուցված գործողությունը ձեռնարկել է միայն ամիսներ անց:

Հանձնաժողովի գնահատմամբ, գործի նյութերը վկայում են, որ Փաստաբանը գիտակցել է իր մասնագիտական պարտականությունների առկայությունն ու բովանդակությունը, այդ թվում՝ պայմանագրային հարաբերությունների դադարեցումից բխող վերադարձման պարտականությունները, սակայն չի ապահովել դրանց պատշաճ և ժամանակին կատարումը: Հետևաբար Հանձնաժողովը սույն գործով հաստատված խախտումները, դրանց կատարման հանգամանքների համակցությամբ, գնահատում է որպես դիտավորությամբ կատարված:

Միաժամանակ, հաշվի առնելով, որ Փաստաբանը նախկինում ևս ենթարկվել է կարգապահական պատասխանատվության նույնաբնույթ մասնագիտական պարտականությունների խախտումների համար, իսկ նրա նկատմամբ կիրառված տարբեր կարգապահական միջոցները չեն հանգեցրել մասնագիտական վարքագծի պատշաճ փոփոխության, Հանձնաժողովը գտնում է, որ սույն գործով կրկին նույն բնույթի խախտումներ թույլ տալը, իր կատարման հանգամանքների համակցությամբ, համատեղելի չէ փաստաբանի կարգավիճակի հետ:

Կիրառվող տույժի համաչափությունը գնահատելիս Հանձնաժողովը հաշվի է առնում նաև Փաստաբանի նկատմամբ առկա չմարված կարգապահական տույժերը, նախկինում

կիրառված կարգապահական միջոցների բնույթը և դրանց անարդյունավետությունը: Հետևաբար Հանձնաժողովը գտնում է, որ հերթական ավելի մեղմ կարգապահական տույժի կիրառումը տվյալ դեպքում չի կարող համարվել բավարար կարգապահական ներգործության միջոց, իսկ Փաստաբանի նկատմամբ «փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում» տույժի կիրառումը համապատասխանում է Օրենքի 39.10-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով նախատեսված պայմաններին, ինչպես նաև նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված համաչափության և պատասխանատվության անհատականացման պահանջներին:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 7-րդ և 8-րդ մասերի, 39.10-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 2-րդ մասի և 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով, Հանձնաժողովը՝

ՈՐՈՇԵՑ՝

1. Փաստաբան Մարիամ Արամի Աբրահամյանի (արտոնագիր՝ թիվ 490) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ «փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում»՝ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.5.5, 3.6.1 և 3.8.4 (1), (3) ենթակետերի պահանջների խախտման համար:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

Թիվ ԿԳ-26005-2-Ա
27 մայիսի 2026թ.
ք.Երևան